Գևորգ Էմին

Կյանքում հաճախ է այդպես պատահում

Կյանքում հաճա~խ է այդպես պատահում._
Ինչքա~ն կանայք կան այս լայն աշխարհում,
Որ քո կողքի~ն են,
ձեր նու՛յն քաղաքում.
Հաճախ նու՛յն մայթում
Կամ նու՛յն տան բակում,
Բայց…
Այնքա~ն գիտես դու նրանց մասին,
Ինչքան որ Սի՛սը … Մասիսի՛ մասին…

Այո՛, հաճա~խ է այդպես պատահում._
Բայց մի գիշեր է լինում աշխարհում,
Որ, երբ նայում ես մեկի աչքերին,
Սիրո կարոտից ճաքաց շուրթերին,
Բռնում ես մեկի ձեռքը տագնապով.
Շոյու~մ այդ ձեռքը մատներիդ տապով,
Մի վայրկյանի մեջ,
կամ ակընթարթում,
Նրա ողջ կյա~նքն ես գրքի պես կարդում…

Եվ հեռու~- հեռու~ մի գյուղ, կամ քաղաք,
Լեռնային գետի մի խե~նթ աղաղակ,

Մի տուն՝ մոլորվա~ծ օտար քաղաքում,
Մի ծառ՝ խոնարհված անծանոթ մայթում.
Այնպե~ս են հանկարծ հարազատ դառնում,
Որ… զարմանու~մ ես
ու չե~ս հասկանում,
Թե մինչև այսօր
Դու առանց դրա
Ինչպե~ս ես ապրել այս փուչ աշխարհում…
…Ափսո՛ս, որ… քի~չ է այդպես պատահում: